ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ *27-ը հոկտեմբերի 2026թ.*

ժամը 15^{00}

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետ*
Ա. Գրիգորյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ*
Հ. Գևորգյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար*
Վ. Հարությունյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական*
Մ. Դատումյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական*
Ս. Սարգսյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական*

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. 2026 թվականի երրորդ եռամսյակի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ:
2. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
3. Մարզի համայնքների 2026թ. 9 ամիսների սեփական եկամուտների կատարման վերաբերյալ:
4. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2027 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
5. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:
6. Այլ հարցեր:

Նախքան օրակարգային հարցերի քննարկումը Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը ներկայացրեց ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետ Հ. Պողոսյանին՝ մաղթելով նրան աշխատանքային հաջողություններ: Մարզպետը շնորհավորեց նաև Շամիրամ եզդիական համայնքի վերընտրված ղեկավար Մ. Բրոյանին:

Լսեցին՝

1. 2026 թվականի երրորդ եռամսյակի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/Զեկույցը կցվում է/:*

Զեկուցվեց, որ սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կողմից հաշվետու ժամանակահատվածում դիտարկվել է 35 սուբվենցիոն ծրագիր: Կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության նպատակով նախորդ 3 ամսվա ընթացքում ծրագրերը մշտադիտարկվել են ամիսը 2 անգամ՝ ընդհանուր իրականացվել է 174 մշտադիտարկում: Նշվեց, որ յուրաքանչյուր այցի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն, նշվել են թերությունները, կցվել կատարված աշխատանքների լուսանկարները:

Նշվեց, որ բոլոր արձանագրված խնդիրների վերաբերյալ գրավոր կամ բանավոր իրազեկում է իրականացվել: Համայնքների կողմից իրականացվում են համապատասխան շտկումներ և ներկայացվում են մարզպետի աշխատակազմ:

Տեղեկացվեց նաև, որ 2027 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի 4 համայնքներում */Աշտարակ, Թալին, Արևուտ, Ալագյազ/* նախատեսվում է իրականացնել 20 սուբվենցիոն ծրագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 17,3 մլրդ դրամ, որից համայնքների մասնաբաժինը կազմելու է 10,2 մլրդ դրամ, պետբյուջեի մասնաբաժինը՝ 6,8 մլրդ դրամ, իսկ մասնավոր ներդրողներինը՝ շուրջ 177,3 մլն դրամ: Նշված սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթները ներկայացվել են ՀՀ ՏԿԵ նախարարություն:

Նշվեց նաև, որ 2026 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվում է 9 սուբվենցիոն ծրագիր:

Համեմատելով 2026 և 2027 թվականների ցուցանիշները՝ պարզ է դառնում, որ 2027 թվականին սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր արժեքը 2026 թվականի համեմատությամբ ավելացել է շուրջ 355 %-ով:

2. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/ Զեկույցը կցվում է/:*

Զեկուցվեց, որ ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրի ցանկում ներառված ՀՀ Արագածոտնի մարզի 52 դպրոցներից այս պահի դրությամբ 14-ում աշխատանքները ավարտվել են, 2-ը՝ Կարբիի և Ալագյազի միջնակարգ դպրոցները, նախագծահաշվարկային փուլում են, 36 դպրոցներում շինաշխատանքներն ընթացքի մեջ են և գտնվում են տարբեր փուլերում: Նշվեց, որ այս պահի դրությամբ ևս 6 դպրոց գտնվում է ավարտական փուլում: Միաժամանակ դպրոցները համալրվում են գույքով, ինչպես նաև իրակացվում են շինաշխատանքների վերջին շտկումները: Մեծածավալ աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտություն էր առաջացել 11 դպրոց տեղափոխել այլ դպրոցներ՝ երկհերթ ռեժիմով: Նշված գործընթացը բարեհաջող և պատշաճ կազմակերպվել է:

3. Մարզի համայնքների 2026թ. 9 ամիսների սեփական եկամուտների կատարման վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան /Ցուցանիշները կցվում են/ :*

Ն. Գալստյանը ներկայացրեց տեղեկատվություն 2026թ. 9 ամիսների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ: Հավաքագրումը մարզում ընդհանուր կազմել է 63,7 %. Աշտարակ՝ 62.0%, Շամիրամ՝ 75,0%, Ապարան՝ 66,1%, Ալագյազ՝ 86,1%, Մեծածոր՝ 75,3%, Արևուտ՝ 95,9%, Թալին՝ 68,9%, Ծաղկահովիտ՝ 47,7%:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց ՏԿ և ՏԻՀ վարչությանը համայնքների ղեկավարների հետ համատեղ շարունակել պլանավորած ցուցանիշների հավաքագրման գործընթացի վերահսկողությունը և մասնավորապես՝ Ծաղկահովիտ համայնքում իրականացնել աշխատանքներ ցածր ցուցանիշները շտկելու նպատակով:

4. ***Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2027 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն*** //զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան /*Զեկույցը կցվում է/:*

Զեկուցվեց, որ 2022 թվականին հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրից այս պահին ավարտվել է 17-ը: Ներկայացվեց տեղեկատվություն ընթացքի մեջ գտնվող ծրագրերի մասին:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրի ամբողջական փաթեթներ: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր: Ներկայացվեց 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին ամփոփ տեղեկատվություն:

2024 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 23 ամբողջական փաթեթ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանը ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 16 ծրագիր: Ըստ համայնքների ներկայացվեց ծրագրերի բաշխվածության և ընթացքի մասին տեղեկատվություն:

2025 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 19 սուբվենցիոն ծրագրի փաթեթ: Ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 10 ծրագիր և 2 ծրագիր՝ դրական-պայմանով:

2026 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի 5 համայնքներում /Աշտարակ, Ապարան, Ծաղկահովիտ Արևուտ, Մեծաձոր/ իրականացվում է 9 սուբվենցիոն ծրագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է 3 849 387 852 ՀՀ դրամ: Մանրամասն տեղեկատվություն ներկայացվեց ծրագրերի ընթացքի և բնույթի մասին:

2027 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի 4 համայնքներում /Աշտարակ, Թալին, Արևուտ Ալագյազ/ նախատեսվում է իրականացնել 20 սուբվենցիոն ծրագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է 17 308 088 039 ՀՀ դրամ: Ամբողջական փաթեթները ներկայացվել են ՏԿԵ նախարարություն: Ներկայացվեց տեղեկատվություն ծրագրերի բաշխվածության և կատարման ընթացքի մասին:

Քննարկվեց նաև որոշ շինարարական աշխատանքների ուշացման պատճառների, այդ ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների և այդ աշխատանքները ժամկետներում ավարտելու հարցեր:

5. ***Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն*** /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան /*Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ պետական բյուջեի միջոցներով «Համայնքների միավորմանը չմասնակցած, ինչպես նաև փոքր համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի» շրջանակում իրականացվել է ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի գազաֆիկացման աշխատանքները: Ծրագրի արդյունքում համայնքի գազաֆիկացման հարցը գրեթե լուծվել է: Ավարտական ակտը առկա է: Այս պահին իրականացվում է վկայականի ձեռքբերման գործընթաց: ***Մարզպետը հանձնարարեց Հ. Ստեփանյանին*** մինչև նոյեմբերի 10 լուծել առաջացած խնդիրները, ավարտել աշխատանքները և ներկայացնել տեղեկատվություն: Նշվեց նաև, որ այդ ծրագրի շրջանակներում իրականցվել է նաև Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի 1.3 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Աշխատանքները ավարտված են: Ավարտական ակտը առկա է:

Տեղեկատվություն ներկայացվեց ՀՀ Արագածոտնի մարզային ավտոճանապարհների ընթացիկ պահպանության վերաբերյալ, մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության սխեմաների ձեռքբերման, ավտոճանապարհների կահավորման, ճանապարհների գծանշման և ճանապարհային կահավորանքով համալրման աշխատանքների մասին:

Մարզպետի կողմից տրվեց հանձնարարական՝ մարզային ճանապարհների սպասարկման աշխատանքները բարելավելու նպատակով կազմակերպել հանդիպումներ այդ ճանապարհները սպասարկող կազմակերպությունների հետ:

Զեկուցվեց նաև, որ ՀՀ Արագածոտնի մարզի 5 մանկապարտեզներում իրականացվում են վերանորոգման, ինչպես նաև բակերի բարեկարգման աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվում նաև Թալին համայնքի «Ներքին Սասնաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում: Դեպի դպրոց տանող ճանապարհների վերանորոգման աշխատանքներն այս պահի դրությամբ ընթացքի մեջ են Նոր Ամանոս, Սասունիկ, Նոր Եդեսիա, Լուսակն համայնքներում:

Այլ հարցերի շրջանակում ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից առաջարկվեց շրջայց կազմակերպել այն համայնքներ, որտեղ իրականացվում են շինարարական, վերանորոգման, ներքին հարդարման աշխատանքներ՝ արդյունքները տեղում ուսումնասիրելու, խնդիրները վեր հանելու նպատակով:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ և արդյունավետ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **Սերգեյ Մովսիսյան**